ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1927-Ա « 13 » ապրիլի 2026 թ.

ԱՐՄԵՆ ՎԱՐԴԱՆԻ ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ
«ԵՐԵՎԱՆԻ ԷՌՆԵՍՏ ԹԵԼՄԱՆԻ ԱՆՎԱՆ Հ.13 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 3-րդ մասի 4-րդ կետով, 112-րդ հոդվածի 2.1-ին մասով, 130-րդ հոդվածի 1-ին մասով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» ենթակետով, «Հանրակրթության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի հ. 1392-Ն որոշմամբ հաստատված N 3 հավելվածի 60-րդ կետը, ինչպես նաև Արմեն Դանիելյանի դիմումը՝

1. Արմեն Վարդանի Դանիելյանին 2026 թվականի ապրիլի 13-ից ազատել «Երևանի Էռնեստ Թելմանի անվան հ.13 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգողի պաշտոնից՝ լուծելով նրա հետ 2025 թվականի մայիսի 6-ին կնքված աշխատանքային պայմանագիրը և աշխատանքային վերջին օր համարել 2026 թվականի ապրիլի 10-ը:

2. «Երևանի Էռնեստ Թելմանի անվան հ.13 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգողի պարտականությունների կատարումը ժամանակավորապես վերապահել նույն կազմակերպության տնօրեն Ռոբերտ Դավթյանին:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ